

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԲԱԴԱԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 28215/11)

ՎՃԻՌ

Հոդված 3 (դատավարական) • Հնչեղություն ստացած քրեական գործով որպես կասկածյալ կալանքի տակ գտնվելու ընթացքում վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումների ոչ արդյունավետ քննությունը • Դիմումատուի արդյունավետ մասնակցությունը չապահովելը • Քննության՝ ամբողջ ծավալով չհիմնավորված կասեցումը, ինչը հանգեցրել է չորս տարի եւ երեք ամիս տեւողությամբ անգործության • Վատ վերաբերմունքի ենթադրյալ կատարողների նկատմամբ հարուցված քրեական վարույթը կարճելը՝ իշխանությունների անգործության հետեւանքով վաղեմության ժամկետը լրանալու պատճառով

ՍՏԴԱՍԲՈՒՐԳ

13 հունիսի 2023թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Բաղալյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Գաբրիել Կուշկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer]՝ *Նախագահ,*

Թիմ Այքը [Tim Eicke],

Յոնկո Գրոզեւ [Yonko Grozev],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Յոլիեն Շուկինգ Jolien Schukking],

Անա Մարիա Գեռա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Անդրեա Տամիետտի [Andrea Tamietti]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի պրն Նաիրի Բաղալյանի (ղիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2011 թվականի մայիսի 3-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 28215/11),

ենթադրաբար արդյունավետ քննություն չիրականացնելու վերաբերյալ բողոքների մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու մասին որոշումը, կողմերի դիտարկումները,

2022 թվականի սեպտեմբերի 13-ին եւ 2023 թվականի մայիսի 23 ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նշված վերջին օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործը վերաբերում է վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումների առնչությամբ իշխանությունների կողմից արդյունավետ քննություն չիրականացնելուն, եւ բարձրացվում են հարցեր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում:

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուն ծնվել է 1968 թվականին եւ ապրում է Հյուսիսային Հոլիվուդում (Ամերիկայի Միացյալ Նահանգներ): Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ա. Ղազարյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է Միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերը կարելի է ամփոփ շարադրել հետևյալ կերպ:

5. Դիմումատուն պնդել է, որ 1999 թվականի նոյեմբերից 2000 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի խորհրդարանում ահաբեկչական գործողություններ ներառող՝ հնչեղություն ստացած քրեական գործով (թիվ 62207199) որպես կասկածյալ կալանքի տակ գտնվելու ընթացքում, խոստովանություն կորզելու նպատակով քննիչների եւ քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից նա պարբերաբար ենթարկվել է խոշտանգումների: Ենթադրյալ վատ վերաբերմունքը, *inter alia* (ի թիվս այլնի), ներառել է բազմակի հարվածներ գլխին, որի հետեւանքով կոտրվել է հինգ ատամ, դեֆորմացվել է քթի միջնապատը եւ մասնակիորեն կորել է լսողությունը: Նրան նաեւ բավական երկար ժամանակ ենթադրաբար թույլ չեն տվել քնել կամ նստել:

6. 2000 թվականի հունիսի 27-ին դիմումատուի դեմ հարուցված քրեական գործը կարճվել է ապացույցների բացակայության հիմքով:

7. 2000 թվականի հունիսի 30-ին դիմումատուն բողոք է ներկայացրել իշխանություններին՝ վատ վերաբերմունքի մասին, որին նա ենթադրաբար ենթարկվել է: Այս առնչությամբ նա 2000 թվականի հուլիսի 17-ին հարցաքննվել է:

8. 2000 թվականի հուլիսի 18-ին դիմումատուն ենթարկվել է դատաբժշկական փորձաքննության, որի արդյունքում նրա գլխի եւ մարմնի վրա հայտնաբերվել են մի շարք վնասվածքներ, այդ թվում՝ հինգ կոտրված ատամ, քրի կոտրված միջնապատ եւ լսողության կորուստ: Այդուհանդերձ, փորձաքննությունն ուշ կազմակերպելու հետեւանքով դատաբժշկական փորձագետին չի հաջողվել որոշել, թե երբ են այդ վնասվածքները հասցվել:

9. 2000 թվականի հուլիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ցուցմունքներ են վերցվել դիմումատուի նախկին խցակիցներից, քրեակատարողական հիմնարկի պետից եւ դատաբժշկական փորձագետից, սակայն լրացուցիչ քննություն չի իրականացվել: Ինչպես պարզ է դառնում, դիմումատուի խցակիցները հերքել են, որ նա ենթարկվել է վատ վերաբերմունքի:

10. 2002 թվականի մարտի 4-ին՝ դիմումատուի կողմից նորից բողոքներ ներկայացվելուց եւ Ամնեստի Ինթերնեշնլ ընկերության եւ Հայաստանի խորհրդարանի կողմից միջամտություններից հետո, Գլխավոր դատախազը դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքի փաստի առթիվ հարուցել է քրեական վարույթ (թիվ 62201102)՝ Քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, որը զուգորդվել է բռնությամբ): Ինչպես պարզ է դառնում, դիմումատուն գործում պաշտոնապես ներգրավված է եղել որպես վկա: Նա մի քանի անգամ հարցաքննվել է եւ վերահաստատել է վատ վերաբերմունքի մասին իր պնդումները:

11. 2002 թվականի մարտի 20-ին քննիչը կարգադրել է, որ դիմումատուն անցնի լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացությունները տրվել են 2002 թվականի մայիսի 3-ին եւ հաստատել են նախորդ դատաբժշկական փորձաքննության եզրահանգումները:

12. Գործի նյութերի համաձայն՝ 2002 թվականի մարտից 2003 թվականի

ապրիլն ընկած ժամանակահատվածում հարցաքննվել է առնվազն տասներեք վկա, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկի մի քանի ծառայողներ, թիվ 62207199 քրեական գործով քննչական խմբի անդամները եւ դիմումատուի գործով դիմումատուին ներկայացնող չորս դատապաշտպանները եւ նրա նախկին խցակիցները:

13. Առանց հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու՝ դիմումատուն պնդել է, որ 2002 թվականի մայիսից 2003 թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում նա լսել է գաղտնի հսկողության ձայնագրառումները, որոնք կատարվել են այն խցում, որտեղ նա գտնվել է կալանքի տակ, եւ որոնք ձեռք են բերվել դատարանի որոշմամբ եւ ընդունվել որպես ապացույց: Ձայնագրառումները լսելիս նա ենթադրաբար ճանաչել է իր նկատմամբ վատ վերաբերմունք իրականացնող անձանց ձայները: Նա նաեւ պնդել է, որ ապացուցվել է, որ իր դեմ կատարված հանցագործությունները տեղի են ունեցել դեռեւս 2003 թվականի ամռանը, սակայն ՀՀ նախագահին ու գլխավոր դատախազը քաղաքական նկատառումներով միջամտել են եւ պահանջել, որ նախաքննության մարմինը դադարեցնի նախաքննությունը, իսկ իր գործով զբաղվող քննիչին հանձնարարվել է մեկ այլ գործ:

14. 2003 թվականի հոկտեմբերի 19-ին դիմումատուն մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ 2006 եւ 2007 թվականներին կայացված որոշումների համաձայն նրան տրամադրվել է քաղաքական ապաստան՝ ելնելով Հայաստան վերադառնալու դեպքում նրա անվտանգության հետ կապված մտավախություններից:

15. 2004 թվականի նոյեմբերի 10-ին քրեական գործը վարող քննիչը տվել է մամլո ասուլիս, որի ժամանակ նա հայտարարել է, որ դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքի փաստը հաստատվել է, եւ որ վատ վերաբերմունքն իրականացնող անձինք պետք է կրեն պատասխանատվություն:

16. 2005 թվականի հունվարի 21-ին քննիչը Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն կասեցրել է

քրեական վարույթն այն հիմքով, որ առկա է *անհաղթահարելի ուժ*, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով վարույթի հետագա իրականացումը: Մասնավորապես նշվել է, որ հաշվի առնելով դիմումատուի եւ թիվ 62207199 քրեական գործով քննչական թիմի անդամների ցուցմունքների միջեւ անհամապատասխանությունները՝ անհրաժեշտ էր իրականացնել դիմումատուի մասնակցությամբ լրացուցիչ քննչական միջոցառումներ, այդ թվում՝ հարցաքննություններ եւ առերեսումներ: Այդուհանդերձ, դա հնարավոր չէր, քանի որ դիմումատուն մեկնել էր Միացյալ Նահանգներ, եւ մամուլին տրված իր հարցազրույցներում նա հայտարարել է, որ անվտանգության նկատառումներից ելնելով՝ դիմումատուն դեռեւս մտադրություն չունի վերադառնալու Հայաստան: Այս հանգամանքներում հնարավոր չի եղել իրականացնել ենթադրյալ վատ վերաբերմունք իրականացնող անձանց արարքների վերջնական գնահատում: Այդ պատճառով անհրաժեշտ էր կասեցնել վարույթը, մինչեւ վարույթի կասեցման հիմքերը կվերանայեին: Դիմումատուն այս որոշման մասին չի ծանուցվել:

17. Ինչպես պարզ է դառնում, չնշված ամսաթվին դիմումատուն վարձել է փաստաբան՝ իր շահերը ներկայացնելու համար:

18. 2006 թվականի ապրիլի 13-ին փաստաբանը հարցում է կատարել գործի ընթացքի վերաբերյալ, եւ 2006 թվականի ապրիլի 26-ի գրությամբ նրան տեղեկացրել են, որ քրեական վարույթը կասեցվել է:

19. 2006 թվականի օգոստոսի 28-ին դիմումատուն վարձել է մեկ այլ փաստաբանի՝ Ջ.Փ.-ին:

20. 2006 թվականի հոկտեմբերի 31-ին Ջ.Փ.-ն քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը բողոքարկել է Գլխավոր դատախազին: Նա պնդել է, որ «*անհաղթահարելի ուժ*» եզրույթը ՔԴՕ-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իմաստով նշանակում է երկրաշարժ, ջրհեղեղ, պատերազմ կամ նման այլ աղետներ, եւ պահանջել է վերսկսել վարույթը: Ինչպես պարզ է դառնում, պահանջը մերժվել է:

21. Չնշված ամսաթվին Ջ.Փ.-ն նույն հիմքերով բողոք է ներկայացրել

դատարաններ:

22. 2006 թվականի նոյեմբերի 23-ին Ջ.Փ.-ին տրամադրվել են Գլխավոր դատախազությունում գտնվող գործի որոշ նյութեր, այդ թվում՝ վարույթը կասեցնելու մասին որոշումը: Նրան բացատրել են, որ քննությունը կվերսկսվի այն ժամանակ, երբ դիմումատուն ներկայանա նախաքննության մարմին:

23. 2006 թվականի նոյեմբերի 24-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը (Վարչական շրջանի դատարան) մերժել է Ջ.Փ.-ի բողոքը (տե՛ս վերելում՝ 21-րդ պարբերությունը) այն հիմքով, որ դիմումատուն գործում ներգրավված էր որպես վկա, եւ որ նա երբեք չի ճանաչվել տուժող կամ քաղաքացիական հայցվոր, ուստի նա իրավունք չուներ վիճարկելու քննիչի՝ քննությունը կասեցնելու մասին որոշումը:

24. 2007 թվականի հունվարի 28-ին Ջ.Փ.-ն դիմել է Գլխավոր դատախազին՝ բողոքելով, որ նախաքննության մարմինը չի իրականացրել վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումների պատշաճ ուսումնասիրություն: Նա նաեւ բողոքել է դիմումատուին տուժող չճանաչելու եւ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման դեմ (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը): Փաստաբանը պահանջել է թիվ 62201102 քրեական գործով վարույթի նպատակով դիմումատուին ճանաչել տուժող (տե՛ս վերելում՝ 10-րդ պարբերությունը)՝ պնդելով, որ նախաքննության մարմինը պետք է դա աներ քրեական վարույթը հարուցելուց անմիջապես հետո, եւ որ դա չէր արվել՝ քրեական գործով վարույթի ընթացքում տուժողին վերապահված իրավունքներից դիմումատուին զրկելու նպատակով: Նա նաեւ պահանջել է բեկանել 2005 թվականի հունվարի 21-ի որոշումը՝ *անհաղթահարելի ուժի բացակայության հիմքով*: Ինչպես պարզ է դառնում, այդ պահանջը մերժվել է:

25. 2007 թվականի փետրվարի 16-ին Ջ.Փ.-ն համանման դիմում է ներկայացրել դատարաններ:

26. 2007 թվականի ապրիլի 6-ին Վարչական շրջանի դատարանը մերժել է բողոքները, այդ թվում՝ դիմումատուին տուժող ճանաչելու պահանջը: Դատարանը

որոշել է, որ նախաքննության ընթացքում իրականացվել են բոլոր անհրաժեշտ քննչական եւ դատավարական միջոցառումները, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուն մեկնել է երկրից, հնարավոր չի եղել որոշել գործի վերջնական արդյունքը: Դիմումատուն չի ճանաչվել տուժող, իսկ նրա փաստաբանը՝ Ջ.Փ.-ն, չի ճանաչվել տուժողի օրինական ներկայացուցիչ, քանի որ նախաքննության այդ փուլում առկա չեն եղել այդպիսիք ճանաչելու իրավական հիմքեր: Այդուհանդերձ, Ջ.Փ.-ն հրավիրվել է Գլխավոր դատախազություն, որտեղ նրան ներկայացվել են քննությունը կասեցնելու պատճառները եւ բոլոր այն նյութերը, որոնք թույլ չեն տալիս ճանաչել դիմումատուի՝ որպես տուժողի կարգավիճակը: Նրան նաեւ բացատրել են, որ քրեական գործով վարույթն անմիջապես կվերսկսվի, երբ դիմումատուն ներկայանա նախաքննության մարմին: Դատարանը եզրակացրել է, որ նախաքննության մարմնի բոլոր գործողությունները եղել են օրինական:

27. 2007 թվականի մայիսի 30-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է փաստաբան Ջ.Փ.-ի՝ այդ որոշման դեմ ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ գտնելով, որ պահանջվում էր դիմումատուի ներկայությունը՝ գործի հանգամանքները պարզելու եւ առերեսումներ ու այլ անհրաժեշտ քննչական միջոցառումներ իրականացնելու համար, ինչը հետագայում կարող էր հիմք լինել՝ դիմումատուին տուժող ճանաչելու համար, եւ որ դիմումատուի բացակայության պայմաններում դա անհնար էր իրականացնել: Որոշումն ուժի մեջ է մտել այն հրապարակելու պահից:

28. Ինչպես պարզ է դառնում, 2007 թվականի օգոստոսի 28-ին դիմումատուի կողմից վարձված մեկ այլ փաստաբան՝ Կ.Մ.-ն, դիմում է ներկայացրել Գլխավոր դատախազություն՝ պահանջելով իրեն տրամադրել գործի նյութերը եւ բողոքելով Վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի մայիսի 30-ի որոշման դեմ:

29. 2007 թվականի սեպտեմբերի 7-ին Գլխավոր դատախազությունը հրաժարվել է տրամադրել գործի նյութերն այն հիմքերով, որ գործը կասեցված էր, եւ դիմումատուն չէր ճանաչվել տուժող: Այն նաեւ նշել է, որ քննությունը կվերսկսվի

այն ժամանակ, երբ դիմումատուն ներկայանա նախաքննության մարմին:

30. 2007 թվականի հոկտեմբերի 15-ին Կ.Մ.-ն բողոք է ներկայացրել Վարչական շրջանի դատարան՝ պնդելով, որ դիմումատուին տուժող ճանաչելու եւ նրան գործի նյութերը տրամադրելու մերժումն անօրինական էր: Նա նշել է, որ համաձայն չէ Վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի մայիսի 30-ի որոշման հետ (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը), եւ որ մտադիր է այն վիճարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում՝ պնդելով, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Փաստաբանը նաեւ վիճարկել է քննությունը կասեցնելու հիմքերը՝ պնդելով, որ դրանք չեն կարող համարվել *անհաղթահարելի ուժ*: Ավելին, նախքան կասեցումը քննությունն արդեն ընթացքի մեջ է եղել մոտ երեք տարի, եւ այդ ժամանակահատվածում իրականացվել են բոլոր անհրաժեշտ առերեսումները: Գլխավոր դատախազությունը չի պարզաբանել, թե ինչ այլ առերեսումներ էին անհրաժեշտ իրականացնել:

31. Այդ բողոքի արդյունքը հայտնի չէ:

32. 2008 թվականի դեկտեմբերի 10-ին դիմումատուն գրությամբ դիմել է Հայաստանի նախագահին, պատճենն ուղարկելով Գլխավոր դատախազին՝ պահանջելով ձեռնարկել անվտանգության միջոցառումներ՝ Հայաստան իր անվտանգ վերադարձն ապահովելու համար:

33. 2009 թվականի փետրվարի 27-ին Գլխավոր դատախազը պատասխանել է դիմումատուին՝ նշելով այն փաստը, որ նրա դեմ հարուցված քրեական գործով վարույթն ավարտվել էր, եւ նա համարվում էր արդարացված անձ: Նրան խնդրել են ներկայացնել կոնկրետ փաստեր՝ ի հաստատումն այն վնասի ռիսկի, որին, նրա պնդմամբ, նա կարող էր առերեսվել Հայաստան վերադառնալու դեպքում, որպեսզի իշխանությունները կարողանային ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

34. 2009 թվականի ապրիլի 7-ին դիմումատուն դիմել է Գլխավոր դատախազին՝ պնդելով, *inter alia*, որ վատ վերաբերմունքի մասին նրա

պնդումների փաստի առթիվ քրեական վարույթի կասեցումը նրա բացակայության պատրվակով ուղղակի առիթ էր քրեական գործով վարույթը չշարունակելու եւ վատ վերաբերմունք իրականացնող անձանց՝ պատասխանատվությունից խուսափելը թույլ տալու համար: Նա Հայաստանից մեկնել է գործը հարուցելուց հետո տասնինը ամիս անց: Մինչ այդ նախաքննության մարմինը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ նրա պնդումների առնչությամբ քննություն իրականացնելու համար, եւ հետեւաբար նրա մեկնումը ոչինչ չի փոխել եւ ուղղակի պատրվակ է եղել քրեական վարույթը կասեցնելու համար: Եվ վերջապես դիմումատուն տեղեկացրել է Գլխավոր դատախազին, որ վերադարձել է Հայաստան, եւ պահանջել է վերսկսել քրեական վարույթը:

35. 2009 թվականի մայիսի 4-ին քրեական վարույթը վերսկսվել է այն հիմքով, որ դիմումատուն վերադարձել է Հայաստան:

36. Նույն ամսաթվին դիմումատուն պաշտոնապես ճանաչվել է քրեական գործով տուժող: Որոշման մեջ ամփոփվել են վատ վերաբերմունքի մասին նրա պնդումները եւ այն փաստը, որ դատաբժշկական փորձաքննությամբ հաստատվել է վնասվածքների առկայությունը: Ավելին, դիմումատուն նշել է ենթադրաբար վատ վերաբերմունք իրականացնող պաշտոնյաների ինքնությունը եւ իշխանություններին ներկայացված իր դիմումներում պահանջել է իրեն ճանաչել տուժող: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուի նկատմամբ վերոնշյալ պաշտոնյաների կողմից իրականացված վատ վերաբերմունքը նախաքննությամբ հաստատվել է, անհրաժեշտ էր նրան ճանաչել տուժող:

37. 2009 թվականի մայիսի 27-ին նշանակվել է փորձագետների խմբի կողմից իրականացվող լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն: Փորձագետներից պահանջվել է հաստատել նախորդ դատաբժշկական փորձաքննության եզրակացությունների ճշգրտությունը եւ որոշել, թե արդյոք դիմումատուն ունեցել է հիվանդություններ կամ ստացել է մարմնական վնասվածքներ: Չնշված ամսաթվին փորձագետները ներկայացրել են իրենց եզրակացությունը, որի համաձայն՝ նախորդ դատաբժշկական փորձաքննություն

իրականացնելու ձգձգումների եւ դրա արդյունքում առաջացած՝ եզրակացությունների անորոշության պատճառով հնարավոր չի եղել վստահաբար պատասխանել քննիչի հարցադրումներին:

38. 2009 թվականի օգոստոսին քրեակատարողական հիմնարկի ծառայողը, որը հարցաքննվել էր 2003 թվականի ապրիլին, եւս մեկ անգամ հարցաքննվել է որպէս վկա: Կատարվել է առերեսում այդ ծառայողի եւ նույն հիմնարկի մեկ այլ ծառայողի միջեւ, որը եւս նախկինում հարցաքննվել էր 2003 թվականի ապրիլին:

39. 2009 թվականի օգոստոսի 27-ին դիմումատուի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի փաստով մեղադրանք է առաջադրվել Ջինվորական դատախազության քննիչին եւ այն հիմնարկի երկու ծառայողներին, որտեղ կալանավորված է եղել դիմումատուն, որոնք մեղադրվել են հարկադրանքով ցուցմունք կորզելու մեջ:

40. 2009 թվականի նոյեմբերի 2-ին քննիչը նշանակել է դատաձեռագրաբանական փորձաքննություն՝ պարզելու, թե արդյոք դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքը կարող էր պատվիրված լինել եւ կանխամտածվել այդ ժամանակ պաշտոնավարող Ջինվորական դատախազի կողմից: Դատաձեռագրաբանական փորձագետներն իրենց եզրակացությունը ներկայացրել են 2009 թվականի նոյեմբերի 24-ին՝ չգալով եզրափակիչ եզրահանգումների:

41. 2010 թվականի մայիսի 31-ին քննիչը որոշել է հանել մեղադրանքները եւ կարճել քրեական գործով վարույթը: Նա գտել է, որ թեեւ դիմումատուն հավանաբար ենթարկվել է վատ վերաբերմունքի, հնարավոր չի եղել վերջնականապէս պարզել, թե ու՞մ կողմից, ե՞րբ եւ ի՞նչ դրդապատճառներով: Ձեռքբերված ապացույցները բավարար չէին քրեական հետապնդումը շարունակելու կամ այլ պաշտոնյաների մեղադրանք առաջադրելու համար, իսկ նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները սպառվել էին: Դեպքերից հետո անցած ժամանակը եւ գործով փաստերի առանձնահատկություններն անհնարին են դարձրել դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքի հատուկ հանգամանքները որոշելը: Նախաքննության մարմինը դժվարացել է ճշգրիտ

բնութագրել ենթադրաբար կատարված արարքները քրեական իրավունքի դրույթների շրջանակներում: Այդուհանդերձ, բոլոր դեպքերում քրեական վարույթը պետք է դադարեցվեր՝ համապատասխան վաղեմության ժամկետը լրանալու պատճառով: Այդ եզրահանգումներում քննիչը հիմնվել է 2000, 2002 եւ 2009 թվականներին իրականացված դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների (տե՛ս վերելում՝ 8-րդ, 11-րդ եւ 37-րդ պարբերությունները), 2002 եւ 2003 թվականներին տրված՝ վկաների ցուցմունքների, ինչպես նաեւ 2009 Նթվականի օգոստոսին իրականացված առերեսման ժամանակ վկաներից մեկի կողմից տրված ցուցմունքի (տե՛ս վերելում՝ 12-րդ եւ 38-րդ պարբերությունները) եւ ձեռագրաբանական փորձաքննության արդյունքների (տե՛ս վերելում՝ 40-րդ պարբերությունը) վրա:

42. 2010 թվականի հունիսի 25-ին դիմումատուն քննիչի որոշումը վիճարկել է դատարաններում:

43. 2010 թվականի հուլիսի 28-ին եւ օգոստոսի 30-ին համապատասխանաբար Վարչական շրջանի դատարանը եւ Վերաքննիչ քրեական դատարանը մերժել են դիմումատուի վերաքննիչ բողոքները եւ քննիչի որոշումը թողել անփոփոխ:

44. 2010 թվականի սեպտեմբերի 30-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ ճանաչվել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

45. Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 31-րդ հոդվածի 1 ին մասի 5-րդ կետով սահմանվում է, որ քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթը:

46. ՔԴՕ-ի 58-րդ հոդվածը սահմանում է, որ տուժող է ճանաչվում այն անձը,

որին քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: ՔԴՕ-ի 100-րդ հոդվածի համաձայն՝ դատավարության մասնակից չհանդիսացող ցանկացած անձ հիմքերի առկայության դեպքում իրավունք ունի պահանջելու իրեն ճանաչել տուժող:

47. Նշված ժամանակահատվածում գործող ՔԴՕ-ի 402-րդ եւ 403-րդ հոդվածները սահմանել են, որ Վերաքննիչ դատարանի դատավճիռը կամ որոշումն օրինական ուժի մեջ է հրապարակման պահից, իսկ Վճռաբեկ դատարանն ունի առաջին աստիճանի եւ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները եւ որոշումները վերանայելու իրավունք: ՔԴՕ-ի 404-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք է վերապահվում Գլխավոր դատախազին եւ նրա տեղակալներին, ինչպես նաեւ վարույթի կողմերին, ինչպես օրինակ՝ մեղադրյալին, տուժողին եւ քաղաքացիական հայցվորին կամ ամբաստանյալին: ՔԴՕ-ի 412-րդ հոդվածին համապատասխան՝ նման բողոքներ կարող են բերվել ավելի ցածր դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 3-ԸՆԴՀԱՆՈՒՄԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

48. Դիմումատուն բողոքել է, որ վատ վերաբերմունքի մասին իր պնդումների առթիվ հարուցված թիվ 62201102 քրեական վարույթն իրականացվել է իր մի շարք իրավունքների, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի խախտումներով: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա:

49. Դատարանը վերահաստատում է, որ «jura novit curia [դատարանին հայտնի են օրենքները]» սկզբունքի ուժով այն սահմանափակված չէ դիմումատուի կողմից Կոնվենցիային եւ դրան կից արձանագրություններին համապատասխան բերված իրավական հիմքերով եւ իրավունք ունի որոշում կայացնելու բողոքի փաստերի իրավական որակման վերաբերյալ՝ այն դիտարկելով Կոնվենցիայի այն

հողվածների կամ դրույթների համաձայն, որոնք տարբերվում են այն հողվածներից կամ դրույթներից, որոնց վրա հիմնվել է դիմումատուն (տե՛ս Ռադոմիլյան եւ այլք ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ] [Radomilja and Others v. Croatia [GC]], թիվ 37685/10 եւ 22768/12, §§ 114 եւ 126, 2018 թվականի մարտի 20):

50. Սույն գործով գանգատի մասին Կառավարությանը ծանուցելուց հետո կողմերից պահանջվել է ներկայացնել իրենց դիտարկումները Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական հայեցակետի շրջանակում: Կառավարությունն առարկել է դիմումատուի բողոքի վերադարձմանը՝ պնդելով, որ այն պետք է քննության առնվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակներում, ինչպես ներկայացվել է դիմումատուի կողմից (տե՛ս վերելում՝ 48-րդ պարբերությունը), եւ հայտարարվի անընդունելի, քանի որ այդ հոդվածը կիրառելի չէր քննարկվող վարույթի նկատմամբ:

51. Այնուամենայնիվ, Դատարանը համաձայն չէ Կառավարության հետ: Դատարանը նշում է, որ դիմումատուի բողոքի էությունն այն է, որ վատ վերաբերմունքի մասին նրա պնդումների առնչությամբ չի իրականացվել արդյունավետ քննություն, եւ որ մեղավորները պատասխանատվության չեն ենթարկվել: Հետեւաբար Դատարանը տեղին է համարում դիմումատուի բողոքը քննության առնել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական հայեցակետի շրջանակներում (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), Տոլեդո Պոլոն ընդդեմ Իսպանիայի (որոշում) [*Toledo Polo v. Spain* (dec.)], թիվ 39691/18, § 170, 2022 թվականի մարտի 22), որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:»:

Ա. Ընդունելիությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարությունը

52. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն չի պահպանել վեցամսյա ժամկետը, որը պետք է հաշվարկվեր քննիչի 2005 թվականի հունվարի 21-ի որոշման ամսաթվից կամ Վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի մայիսի 30-ի որոշման ամսաթվից (տե՛ս վերելում՝ 16-րդ եւ 27-րդ պարբերությունները): Թեեւ նախաքննությունը պաշտոնապես ավարտվել է քննիչի 2010 թվականի մայիսի 31-ի որոշմամբ (տե՛ս վերելում՝ 41-րդ պարբերությունը), որը բողոքարկման շրջանակներում հաստատվել է Վճռաբեկ դատարանի կողմից 2010 թվականի նոյեմբերի 4-ին (տե՛ս վերելում՝ 44-րդ պարբերությունը), դիմումատուն, որի համար քննության անարդյունավետությունն ակնհայտ է եղել այդ ամբողջ ընթացքում, պետք է գիտակցեր արդյունավետ քննության որեւէ հեռանկարի բացակայությունը եւ իր գանգատը Դատարան ներկայացնելից շատ ավելի վաղ: Փաստորեն բազմաթիվ գործոններ վկայել են այն մասին, որ նախաքննության անարդյունավետության մասին նա արդեն տեղյակ է եղել մինչեւ 2005 թվականի հունվարի 21-ին վարույթը կասեցնելու մասին որոշումը կայացվելը (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը), քանի որ անձամբ ինքն է պնդել, որ 2002 թվականից ի վեր որեւէ քննչական միջոցառում չի իրականացվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, թե ինչպես էր իրականացվել նախաքննությունը 2002 թվականից ի վեր, եւ այն փաստը, որ դիմումատուի բոլոր բողոքները մերժվել էին Գլխավոր դատախազի եւ դատարանների կողմից, դիմումատուն չէր կարող իրավաչափորեն ենթադրել, որ իրականում հնարավոր էր քննությունը շարունակել: Ավելին, 2007 թվականի սեպտեմբերից 2008 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում դիմումատուի եւ իշխանությունների միջեւ չեն եղել առարկայական շփումներ: Այսպիսով, 2005 թվականի հունվարի 21-ի՝ նախաքննությունը կասեցնելու մասին քննիչի որոշումը (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը) դիմումատուի կողմից պետք է համարվեր վերջնական որոշում: Հատկանշական է, որ դիմումատուն Դատարան դիմելու իր մտադրության մասին առաջին անգամ հայտնել է 2007 թվականի հոկտեմբերի 15-ի իր բողոքում (տե՛ս վերելում՝ 30-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, նա իր գանգատը ներկայացրել է միայն 2011 թվականի մայիսի 3-ին՝ ենթադրյալ վատ

վերաբերմունքից ավելի քան տասներկու տարի անց:

53. Կառավարությունը նաեւ պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նա չի ներկայացրել վճռաբեկ բողոք՝ վարույթը կասեցնելու մասին քննիչի որոշումն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի մայիսի 30-ի որոշման դեմ (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը):

բ) Դիմումատուն

54. Դիմումատուն նշել է, որ Կառավարությունն ընդունել է, որ գործը լուծող վերջնական որոշումը եղել է 2010 թվականի մայիսի 31-ի որոշումը (տե՛ս վերելում՝ 41-րդ պարբերությունը), որը վճռաբեկ բողոքի շրջանակներում 2010 թվականի նոյեմբերի 4-ին Վճռաբեկ դատարանը թողել է անփոփոխ (տե՛ս վերելում՝ 44-րդ պարբերությունը): Նա իր գանգատը Դատարան է ներկայացրել վերջին որոշումը կայացվելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում եւ այդպիսով պահպանել է վեցամսյա ժամկետի կանոնը: Դիմումատուն նաեւ շեշտել է, որ իր գործը վերաբերում էր շարունակական իրավիճակին: Նա միշտ ակտիվ ջանքեր է գործադրել, որպեսզի իր պնդումները քննության առնվեն՝ իր նկատմամբ վատ վերաբերմունքի մասին հայտնելով 2000 թվականի հունիսին ազատ արձակվելուց անմիջապես հետո (տե՛ս վերելում՝ 7-րդ պարբերությունը), եւ նրա անխոնջ ջանքերի շնորհիվ, ի վերջո, 2002 թվականի մարտին հարուցվել է քրեական գործ (տե՛ս վերելում՝ 10-րդ պարբերությունը): 2002 թվականի մայիսից 2003 թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում նա լսել է իր խցում արված գաղտնի հսկողության ձայնագրառումները (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը): 2003 թվականի հոկտեմբերին նա նաեւ ստիպված է եղել մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ նրան շնորհվել է քաղաքական ապաստան՝ կապված տվյալ գործի հանգամանքների, այդ թվում՝ իշխանությունների կողմից իր շուրջ ստեղծված թշնամական միջավայրի հետ: Այդ պահից սկսած՝ նախաքննության մարմինն իր յուրաքանչյուր գործողությունն փորձել է արդարացնել՝ հղում

կատարելով նրա՝ Հայաստանում չգտնվելու հանգամանքին: Միեւնույն ժամանակ իշխանությունները պարբերաբար պնդել են, որ նախաքննությունը կվերսկսվի այն ժամանակ, երբ դիմումատուն վերադառնա Հայաստան (տե՛ս վերելում՝ 22-րդ եւ 29-րդ պարբերությունները): 2008 թվականի դեկտեմբերին դրսևորելով ջանասիրություն՝ նա գրավոր դիմել է Հայաստանի նախագահին՝ պահանջելով ձեռնարկել բոլոր անհրաժեշտ անվտանգության միջոցառումները, որոնք թույլ կտան իրեն վերադառնալ երկիր, ինչն ի վերջո տեղի է ունեցել 2009 թվականի ապրիլին: Իր վերադարձից հետո քրեական վարույթը վերսկսվել է, նա ճանաչվել է տուժող, եւ մի քանի անձանց մեղադրանք է առաջադրվել: Դրանք եղել են գործուն եւ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ, որոնք թույլ են տվել դիմումատուին ոչ միայն հավատալ, որ վարույթը վերսկսվել է, այլ նաեւ որ այն կլինի արդյունավետ եւ վնասի ամբողջական փոխհատուցում տրամադրելու հնարավորություն կտա: Նա միշտ հետեւել է նախաքննության ընթացքին եւ կապ է պահպանել իշխանությունների հետ. ճիշտ չէ, որ 2007 թվականի սեպտեմբերից հետո նրա հետ որեւէ կապ չի եղել՝ հաշվի առնելով նրա 2007 թվականի հոկտեմբերի 15-ի բողոքը (տե՛ս վերելում՝ 30-րդ պարբերությունը): Ամփոփելով՝ կարելի է ասել, որ նախքան Դատարան դիմելը դիմումատուի՝ նախաքննության վերջնական արդյունքին սպասելն արդարացված էր: Նույնիսկ եթե տեսականորեն ընդունենք այն փաստարկը, որ 2005 թվականից 2009 թվականը նա անհիմն երկար սպասել է քննությունը վերսկսվելուն, 2009 թվականի մայիսին նախաքննությունը վերսկսվելու հանգամանքն այդ փաստարկը դարձնում է ոչ էական:

55. Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության պնդմանը, ապա դիմումատուն նշել է, որ իր գործը վերաբերում էր շարունակական իրավիճակին, եւ որ Վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի մայիսի 30-ի որոշումը կայացվելու փուլում այն ավարտված չէր: Ավելին, իրավիճակը հետագայում շտկվել էր, քանի որ վարույթը վերսկսվել էր: Այսպիսով, նախաքննությունը շարունակվել էր նաեւ այդ ամսաթվից հետո եւ ավարտվել էր միայն քննիչի 2010 թվականի մայիսի 31-ի որոշմամբ: Քանի որ դա վերջնական որոշումն էր, նա կարելու էր համարել վիճարկել այդ որոշումը

դատարաններում՝ դրանով իսկ սպառելով իրավական պաշտպանության բոլոր արդյունավետ ներպետական միջոցները:

2. Դատարանի գնահատականը

ա) Նախնական հարցեր

56. Նախքան ընդունելիության վերաբերյալ կողմերի փաստարկներն ուսումնասիրելը Դատարանն անհրաժեշտ է համարում որպես նախնական հարց դիտարկել տվյալ գործի առնչությամբ իր ժամանակային իրավագործության հարցը: Այս առնչությամբ այն նշում է, որ Կոնվենցիան Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 26-ին, այսինքն՝ ենթադրյալ վատ վերաբերմունքն իրականացնելուց հետո մոտ երեք տարի անց: Այնուամենայնիվ, դիմումատուի պնդումների քննությանն ուղղված դատավարական գործողությունների զգալի մասը կատարվել է այդ ամսաթվից հետո: Դա նշանակում է, որ Դատարանն ունի ժամանակային իրավագործություն քննության առնելու դիմումատուի բողոքները՝ սահմանափակվելով, սակայն, այն դատավարական գործողություններով, որոնք իրականացվել են կամ պետք է իրականացվեին այդ որոշիչ ամսաթվից հետո (տե՛ս Յանովիցը եւ այլք ընդդեմ Ռուսաստանի [ՄՊ] [Janowiec and Others v. Russia [GC]], թիվ 55508/07 եւ 29520/09, §§ 140-151, ՄԻԵԴ 2013):

բ) Վեցամսյա կանոնի պահպանումը եւ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը

57. Դատարանը համարում է, որ այս հարցերը սերտորեն կապված են դիմումատուի՝ արդյունավետ քննություն չիրականացնելու մասին պնդումների առնչությամբ բողոքի բովանդակության հետ, եւ հետեւաբար պետք է միացվեն բողոքի ըստ էության քննությանը:

գ) Եզրակացությունը

58. Դատարանը նշում է, որ սույն բողոքը ո՛չ ակնհայտորեն անհիմն է, ո՛չ էլ անընդունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

59. Դիմումատուն նշել է, որ իշխանություններն արդյունավետ քննություն չեն իրականացրել խոշտանգումների մասին իր պնդումների առնչությամբ: Նրանք քրեական վարույթի սկզբից մինչեւ 2009 թվականի մայիսի 4-ը չեն ճանաչել իր՝ որպես տուժողի կարգավիճակը, ինչը զգալիորեն սահմանափակել է իր դատավարական իրավունքները եւ նախաքննությանը լիարժեքորեն մասնակցելու հնարավորությունը: 2003 թվականին Հայաստանից իր մեկնումից հետո չեն իրականացվել քննչական միջոցառումներ, իսկ 2005 թվականին առանց հիմնավոր պատճառների քննությունը կասեցվել է ավելի քան չորս տարով՝ այդպիսով խախտելով ցանկացած քննության նկատմամբ կիրառելի՝ օպերատիվորեն եւ ողջամիտ արագությամբ իրականացնելու պահանջները: Նախաքննությունը վերսկսվելուց հետո իրականացվել են միայն մի քանի քննչական միջոցառումներ, որոնք չեն եղել մանրակրկիտ, ո՛չ էլ համարժեք, եւ դրանցից ոչ մեկը չի իրականացվել իր մասնակցությամբ: Ի վերջո, վարույթը կարճվել է ներպետական իրավունքի կոպիտ խախտումներով եւ առանց պատշաճ հիմնավորման: Քննությունը կարճելու պատճառներից էր այն հանգամանքը, որ ենթադրյալ դեպքերից անցել էր երկար ժամանակ, ինչպես նաեւ վաղեմության ժամկետի լրանալը, ինչը հակասում էր Դատարանի նախադեպային իրավունքին:

60. Կառավարությունը դիմումատուի պնդումների վերաբերյալ մեկնաբանություններ չի ներկայացրել:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

61. Դատարանը հղում է կատարում իր նախադեպային իրավունքով հաստատված սկզբունքներին՝ կապված պետության մարմինների կողմից ցուցաբերված վատ վերաբերմունքի մասին պնդումների առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորության հետ (տե՛ս Բույիդն ընդդեմ Բելգիայի [ՄՊ] [Bouyid v. Belgium [GC]], թիվ 23380/09, §§ 114-123, ՄԻԵԴ 2015): Դրանում մասնավորապես նշվում է այն պահանջը, որ նման քննությունը պետք է իրականացվի օպերատիվորեն եւ ողջամտորեն արագ: Թեեւ կարող են լինել խոչընդոտներ կամ դժվարություններ, որոնք խաթարում են կոնկրետ իրավիճակում քննության առաջընթացը, վատ վերաբերմունքի մասին պնդումների առնչությամբ քննությանն իշխանությունների արագ արձագանքն ընդհանուր առմամբ կարող է շատ կարեւոր համարվել նրանց՝ օրենքի գերակայությանը հավատարիմ լինելու եվ անօրինական արարքներին համաձայնություն տալու կամ դրանք հանդուրժելու դեպքերի կանխարգելման նկատմամբ հանրային վստահությունը պահպանելու համար: Ավելին, տուժողը պետք է կարողանա արդյունավետորեն մասնակցել քննությանը: Եվ վերջապես, քննությունը պետք է լինի մանրակրկիտ, ինչը նշանակում է, որ մարմինները պետք է միշտ լրջորեն ձգտեն պարզել, թե ինչ է տեղի ունեցել, եւ իրենց քննությունը փակելու համար չպետք է հիմնվեն հապճեպ արված կամ անհիմն եզրակացությունների վրա (նույն տեղում, §§ 121-123):

62. Դատարանը նաեւ հղում է կատարում իր նախադեպային իրավունքով հաստատված սկզբունքներին՝ վեցամսյա ժամկետի կանոնի կիրառման մասով, այդ թվում՝ այն գործերում, որոնք վերաբերում են վատ վերաբերմունքի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելու՝ պետության պարտավորությանը (տե՛ս Մոկանուն եւ այլք ընդդեմ Ռումինիայի [ՄՊ] [Mocanu and Others v. Romania [GC]], թիվ 10865/09 եւ եւս 2-ը, §§ 258-269, ՄԻԵԴ 2014 (քաղվածքներ)): Դատարանը մասնավորապես վճռել է, որ վատ վերաբերմունքի

առնչությամբ քննությանը վերաբերող գործերում դիմումատուներից ակնկալվում է ձեռնարկել նախաքննության առաջընթացին կամ դրա բացակայությանը հետեւելուն ուղղված քայլեր եւ պատշաճ արագությամբ ներկայացնել իրենց գանգատները, երբ նրանք տեղեկանում են կամ պետք է տեղեկանային քրեական գործով արդյունավետ քննություն չիրականացվելու մասին: Այստեղից հետեւում է, որ դիմումատուներին վերապահված՝ ջանասիրություն դրսևորելու պարտավորությունն ունի երկու տարբեր, սակայն սերտորեն փոխկապակցված ասպեկտ. մի կողմից՝ դիմումատուները պետք է օպերատիվորեն կապ հաստատեն ներպետական իշխանությունների հետ՝ նախաքննության ընթացքի մասին տեղեկանալու համար, ինչը ենթադրում է, որ անհրաժեշտ է դիմել նրանց՝ դրսևորելով ջանասիրություն, քանի որ ցանկացած ուշացում կարող է վտանգել քննության արդյունավետությունը, իսկ մյուս կողմից՝ նրանք պետք է իրենց գանգատն օպերատիվորեն ներկայացնեն Դատարան, երբ տեղեկացվում են կամ պետք է տեղեկացված լինեին քննության անարդյունավետ լինելու մասին: Ջանասիրություն դրսևորելու այս պարտականության առաջին ասպեկտի առնչությամբ Դատարանը վճռել է, որ դիմումատուի կողմից բողոքն ուշացած ներկայացնելը որոշիչ չէ այն դեպքում, երբ իշխանությունները պետք է որ տեղեկացված լինեին, որ տվյալ անձը կարող էր ենթարկվել վատ վերաբերմունքի, քանի որ իշխանությունների՝ քննություն անցկացնելու պարտականությունն առաջանում է նույնիսկ բացահայտ բողոք չներկայացվելու դեպքում: Այդ ուշացումը նաեւ չի ազդում գանգատի ընդունելիության վրա այն դեպքերում, երբ դիմումատուն գտնվել է հատկապես խոցելի վիճակում՝ հաշվի առնելով գործի բարդությունը եւ տվյալ դեպքում մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների բնույթը, եւ երբ դիմումատուի համար նպատակահարմար է եղել սպասել իրադարձությունների զարգացմանը, ինչը կարող էր հանգեցնել կարեւոր փաստական կամ իրավական հարցերի լուծմանը: Ինչ վերաբերում է ջանասիրություն դրսևորելու այս պարտականության երկրորդ ասպեկտին, ապա Դատարանը նշել է, որ ժամանակի մեջ այս փուլն ի հայտ գալու ճշգրիտ պահը որոշելու հարցը միանշանակ կախված է գործի հանգամանքներից, եւ որ դժվար է

այն ճշգրիտ որոշել (նույն տեղում, §§ 263-266):

63. Ուստի Դատարանը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ մերժել է այն գանգատները, որոնց դեպքում դիմումատուների կողմից եղել են չափից շատ կամ չպարզաբանված ձգձգումներ այն պահից սկսած, երբ նրանց հայտնի է դարձել կամ պետք է հայտնի դարձած լիներ, որ չի հարուցվել քննություն, կամ որ քննությունը դադարեցվել է կամ դարձել է անարդյունավետ, եւ այդ դեպքերից ցանկացածի դեպքում պարզ է դարձել, որ առկա չէ հետազայում արդյունավետ քննություն իրականացվելու անմիջական, իրատեսական հեռանկար: Այլ կերպ ասած՝ Դատարանը կենսականորեն անհրաժեշտ է համարում, որ այն անձինք, որոնք ցանկանում են Դատարան բողոք ներկայացնել նման քննությունն անարդյունավետ իրականացնելու կամ ընդհանրապես քննություն չիրականացնելու առնչությամբ, անհարկի չուշացնեն իրենց գանգատը Դատարան ներկայացնելը: Այնպիսի դեպքերում, երբ անցնում է զգալիորեն երկար ժամանակ, եւ քննչական գործողությունները զգալիորեն ձգձգվում եւ դադարեցվում են, գալու է ժամանակ, երբ դիմումատուները պետք է գիտակցեն, որ չի իրականացվել կամ չի իրականացվելու արդյունավետ քննություն: Այնուամենայնիվ, Դատարանը վճռել է, որ քանի դեռ դիմումատուների եւ իշխանությունների միջեւ առկա են առարկայական շփումներ բողոքների եւ տեղեկատվության հարցումների վերաբերյալ, կամ առկա են նշաններ, որոնք վկայում են քննչական միջոցառումների իրականացման առաջընթացի կամ այդ առաջընթացի իրատեսական հնարավորության մասին, դիմումատուների կողմից անհարկի ձգձգումների հարցն ընդհանուր առմամբ չի դիտարկվում (նույն տեղում՝ §§ 268-269):

բ) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործում

64. Սույն գործով դիմումատուն անմիջապես հայտարարել է ազգային իշխանություններին այն մասին, որ հնչեղություն ստացած քրեական գործով կալանքի տակ գտնվելու ընթացքում 1999-2000 թվականներին ենթարկվել է

բռնության: Պարզ է դարձել, որ 2000 թվականին իրականացվել է հետաքննություն՝ առանց մեծ արդյունքի, սակայն, ինչպես նշվել է վերելում, այդ դեպքերը դուրս են Դատարանի ժամանակային իրավագործությունից (տե՛ս վերելում՝ 56-րդ պարբերությունը): Ինչ վերաբերում է 2002 թվականի ապրիլի 26 ից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա Դատարանը նշում է, որ 2002 թվականի մարտին քրեական գործը հարուցելուց հետո իրականացվել են մի շարք քննչական միջոցառումներ (տե՛ս վերելում՝ 10-12-րդ պարբերությունները): Այդուհանդերձ, պարզ է դարձել, որ 2003 թվականի ապրիլից ի վեր կամ գաղտնի հսկողության ձայնագրառումների վերաբերյալ դիմումատուի բողոքն ընդունելու դեպքում (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը)՝ ամենաուշը 2003 թվականի հոկտեմբերից ի վեր, քննությունն ամբողջովին դադարեցվել է: Մինչ այդ օրը հավաքված ապացույցները գնահատելու կամ լրացուցիչ ապացույցներ հավաքելու ուղղությամբ հետագա քայլեր ձեռնարկելու փոխարեն քննությունը դադարեցվել է առնվազն տասնհինգ ամսով, որից հետո 2005 թվականի հունվարին որոշում է կայացվել պաշտոնապես կասեցնելու քննությունը՝ Հայաստանից դիմումատուի բացակայության հիմքով, ինչը ենթադրաբար անհնար էր դարձնում քննությունը շարունակելը, քանի որ, քննիչի պատճառաբանության համաձայն, անհրաժեշտ էր դիմումատուի մասնակցությամբ իրականացնել լրացուցիչ հարցաքննություններ եւ առերեսումներ (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը):

65. Այնուամենայնիվ, քննիչի որոշման մեջ նշված հիմքերը Դատարանի համար համոզիչ չեն: Դատարանը նախ նշում է, որ այդ որոշումը, թեև վերաբերել է դիմումատուի մասնակցությամբ քննչական միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությանը, չի պարունակել կոնկրետ մանրամասներ եւ ձեւակերպված է եղել բավական վերացական եզրույթներով (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը): Չի ներկայացվել համոզիչ կամ բավարար բացատրություն դիմումատուի հետ լրացուցիչ հարցաքննություններ անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ, որը նախկինում բազմիցս հարցաքննվել էր (տե՛ս վերելում՝ 7-րդ եւ 10-րդ պարբերությունները): Բավականաչափ հստակ չէր նաեւ, թե կոնկրետ ում հետ էր կենսականորեն անհրաժեշտ անցկացնել առերեսումները, կամ թե ինչու այդ առերեսումները չէին իրականացվել ավելի վաղ, երբ

դիմումատուն դեռևս գտնվում էր Հայաստանում: Հատկանշական է, որ դիմումատուն երբեւէ չի հրավիրվել մասնակցելու որեւէ նման քննչական միջոցառման ո՛չ Հայաստանից մեկնելուց առաջ, ո՛չ դրանից հետո: Ավելին, դիմումատուի մասնակցությամբ այդ հարցաքննություններից կամ առերեսումներից ոչ մեկը փաստացի չի իրականացվել նրա՝ Հայաստան վերադառնալուց եւ քննությունը վերսկսվելուց հետո (տե՛ս վերելում՝ 35-41-րդ պարբերությունները), ինչը տպավորություն է ստեղծում, որ այդ հիմքն օգտագործվել է միայն որպես քննությունը կասեցնելու եւ դրանով իսկ այն խոչընդոտելու պատրվակ:

66. Ավելին, նույնիսկ եթե ենթադրենք, որ առկա է եղել դիմումատուի մասնակցությամբ քննչական միջոցառումներ իրականացնելու իրական անհրաժեշտություն, եւ որ իրապես անհնար է եղել դրանք իրականացնել նրա բացակայությամբ, Դատարանը համոզված չէ, որ այդ պատճառաբանությունը բավարար էր քննության ամբողջ ընթացքը, այդ թվում՝ այնպիսի միջոցառումների իրականացումը կասեցնելու համար, որոնք չէին պահանջում դիմումատուի մասնակցությունը: Հատկանշական է, որ ներպետական իրավունքի իմաստով *անհաղթահարելի ուժի* բացակայության վերաբերյալ դիմումատուի բոլոր փաստարկները (տե՛ս վերելում՝ 45-րդ պարբերությունը) մնացել են անպատասխան ներպետական դատարանների կողմից, որոնց որոշումները նույնպես չեն պարունակել քննությունը կասեցնելու անհրաժեշտության պատճառաբանված հիմնավորումներ եւ ձեւակերպվել են շատ ընդհանուր եզրույթներով (տե՛ս վերելում՝ 26-րդ եւ 27-րդ պարբերությունները): Հետեւաբար Դատարանը եզրակացնում է, որ քննությունը կասեցնելու մասին որոշումը, ինչը հանգեցրել է առնվազն չորս տարի եւ երեք ամիս անգործության, մասնավորապես՝ 2005 թվականի հունվարի 21-ից 2009 թվականի մայիսի 4-ը, եղել է չհիմնավորված: Դա նշանակում է, որ ընդհանուր առմամբ առնվազն հինգ եւ կես տարի քննությունն ամբողջությամբ դադարեցված է եղել չպարզաբանված կամ չհիմնավորված պատճառներով, որոնք կապված են իշխանությունների անգործության հետ, եւ ոչ թե դիմումատուին վերագրվող պատճառներով: Այդպիսի քննությունը չի կարող

համարվել օպերատիվ եւ արագ իրականացված:

67. Դատարանը նշում է, որ քննությունը վերջնականապես վերսկսվել է 2009 թվականի մայիսին դիմումատուի՝ Հայաստան վերադառնալուց հետո (տե՛ս վերելում՝ 35-րդ պարբերությունը), որից հետո իրականացվել են որոշ քննչական միջոցառումներ, եւ երեք պետական պաշտոնյաների առաջադրվել է մեղադրանք դիմումատուի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի փաստով: Այդուհանդերձ, քննությունը վերսկսվելուց մոտ մեկ տարի անց քննիչը կարճել է քրեական գործով վարույթը՝ վաղեմության ժամկետը լրանալու պատճառով (տե՛ս վերելում՝ 41-րդ պարբերությունը): Դատարանն այս կապակցությամբ նշում է, որ արդեն վճռել է, որ դժվար է համարել, որ 3-րդ հոդվածից բխող դատավարական պարտավորությունները կատարվել են այն դեպքում, երբ քննությունը կարճվել է իշխանությունների անգործության հետեւանքով առաջացող՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը լրանալու հիմքով (տե՛ս «Ըստ էության խոշտանգման բնույթի արարք համարվող հանցանքի քրեական հետապնդման, դատապարտման եւ պատժի նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիք» [ՄՊ], Դիմում թիվ P16-2021-001, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, § 60, 2022 թվականի ապրիլի 26): Հետեւաբար Դատարանը գտել է, որ 3-րդ հոդվածով նախատեսված դատավարական երաշխիքները խախտվել են այն դեպքերում, երբ վաղեմության ժամկետները կիրառվել են իշխանությունների կողմից արագ եւ պատշաճ ջանասիրությամբ չգործելու արդյունքում (նույն տեղում, § 61, հաջորդող հղումների հետ միասին):

68. Դատարանը նաեւ նշում է, որ քննության առաջին տարիներին, այդ թվում՝ այն ժամանակահատվածում, երբ քննությունը կասեցված է եղել, դիմումատուն չի ճանաչվել տուժող քրեական վարույթի նպատակներով, ինչպես դա պահանջվում էր ներպետական իրավունքով (տե՛ս վերելում՝ 46-րդ պարբերությունը), եւ ներգրավված է եղել որպես վկա, ինչի արդյունքում նա զրկված է եղել քրեական վարույթում տուժողի բոլոր իրավունքներից, այդ թվում՝ քրեական գործով կոնկրետ նյութերին ծանոթանալու եւ գործը վիճարկելու եւ

բողոքարկելու իրավունքներից: Ուստի պաշտոնապես որպես տուժող ներգրավված չլինելու պատճառով դիմումատուն չի տեղեկացվել քննությունը կասեցնելու մասին 2005 թվականի հունվարի 21-ի որոշման վերաբերյալ (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը): Նա նաեւ չի ունեցել այդ որոշումը դատարանում վիճարկելու իրավունք (տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը): Նաեւ չի տրվել համոզիչ բացատրություն վարույթի որեւէ փուլում դիմումատուին տուժող ճանաչելը մերժելու համար (տե՛ս վերելում՝ 26-րդ եւ 27-րդ պարբերությունները): Հետեւաբար իշխանությունները չեն ապահովել դիմումատուի՝ քննությանն արդյունավետ մասնակցությունը:

69. Հանգելով այս եզրակացությանը՝ Դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Կառավարության նախնական առարկություններին (տե՛ս վերելում՝ 52-րդ եւ 53-րդ պարբերությունները):

70. Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ դիմումատուն չի պահպանել վեցամսյա ժամկետը, ապա Դատարանը նշում է, որ կողմերը տարակարծիք են եղել այն կետի վերաբերյալ, որից սկսած՝ քննությունը դադարել է (ըստ Կառավարության՝ 2002 թվականից, իսկ ըստ դիմումատուի՝ 2003 թվականից, տե՛ս վերելում՝ 52-րդ եւ 54-րդ պարբերությունները): Թեեւ գործի նյութերում առկա չեն այնպիսի նյութեր, որոնք հիմնավորում են դիմումատուի այն պնդումը, որ մինչեւ 2003 թվականի հոկտեմբեր ամիսը նա ծանոթացել է գաղտնի հսկողության ձայնագրառումներին, Դատարանին հասանելի նյութերից պարզ է դարձել, որ մինչեւ 2003 թվականի ապրիլ ամիսն իրականացվել են քննչական միջոցառումներ (տե՛ս վերելում՝ 12-րդ պարբերությունը), որից հետո քննությունն անցել է դադարի շրջան, ինչը տեւել է մի քանի տարի, այդ թվում՝ 2005 թվականի հունվարից այն պաշտոնապես կասեցվելը: Այդուհանդերձ, Դատարանը նշում է, որ 2003 թվականի հոկտեմբերին դիմումատուն մեկնել է Միացյալ Նահանգներ եւ տեղյակ չի եղել վարույթը կասեցնելու մասին որոշման վերաբերյալ (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը): Հետեւաբար նա պատճառներ չի ունեցել կարծելու, որ իր բացակայության ժամանակ քննության ընթացքը խոչընդոտվել է: Ճիշտ է, որ Միացյալ Նահանգներ մեկնելուց հետո մոտ երկու եւ կես տարի քննչական

մարմինների եւ դիմումատուի միջեւ շփումներ չեն եղել, մինչեւ որ 2006 թվականի ապրիլին նա հետաքրքրություն է ցուցաբերել՝ հարցում ներկայացնելով քննության ընթացքի մասին (տե՛ս վերելում՝ 18-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում իշխանություններն արել են հրապարակային հայտարարություններ, որոնք կարող էին տպավորություն ստեղծել, որ քննությունն իրականում ընթացքի մեջ էր (տե՛ս վերելում՝ 15-րդ պարբերությունը): Ավելին, անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ դիմումատուի անձնական վիճակը, մասնավորապես՝ այն փաստը, որ «ելնելով վախերից՝ կապված Հայաստան վերադառնալու հետ» (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը), նա գտնվել է Միացյալ Նահանգներում քաղաքական ապաստան հայցելու գործընթացում, ինչն ի վերջո նրան շնորհվել է: Հետեւաբար Դատարանը կարող է ընդունել, որ վերոնշյալ ժամանակահատվածում շփումների բացակայությունը եղել է արդարացված:

71. Դատարանը նաեւ նշում է, որ տեղեկանալով քննությունը կասեցնելու որոշման մասին՝ դիմումատուն չի մատնվել անգործության, փոխարենը նա ձեռնարկել է քայլեր որոշումը բեկանելու ուղղությամբ, որոնք չենք կարող ասել, որ եղել են ակնհայտորեն անարդյունավետ: Մասնավորապես, թեւ ճիշտ է, որ դիմումատուն իրավունք չի ունեցել դատարանում վիճարկելու քննությունը կասեցնելու մասին որոշումը, քանի որ պաշտոնապես չի ճանաչվել տուժող (տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը), նա միանշանակ ունեցել է իրեն տուժող ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք (տե՛ս վերելում՝ 46-րդ պարբերությունը), ինչը նա արել է (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը), եւ նրան հաջողվել է, այնուհետեւ նա ձեռք է բերել այդ որոշումը վիճարկելու իրավունք: Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն Դատարան պետք է դիմած լիներ այդ պահանջը մերժելու մասին որոշման, մասնավորապես՝ Վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի մայիսի 30-ի (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը) որոշման ամսաթվից առավելագույնը վեց ամսվա ընթացքում, եւ որ նա պետք է տեղյակ լիներ, որ հետագայում ներկայացված բոլոր իր բողոքները եւ քննությունը վերականգնելու հույսերը լինելու էին անարդյունավետ: Այդուհանդերձ, Դատարանը նշում է, որ քննությունը կասեցնելու համար

իշխանությունների կողմից ներկայացված պատճառը եղել է դիմումատուի՝ Հայաստանից բացակայելը, եւ որ նրանք պարբերաբար նշել են, որ քննությունը կվերսկսեն, երբ դիմումատուն վերադառնա (տե՛ս վերելում՝ 22-րդ, 26-րդ եւ 29-րդ պարբերությունները): Ուստի դիմումատուն կարող էր ողջամտորեն ակնկալել, որ քննությունը կվերսկսվի եւ կընթանա, եթե եւ երբ նա վերադառնա Հայաստան: Հատկանշական է, որ քննությունն իսկապես վերսկսվել է դիմումատուի՝ Հայաստան վերադառնալուց անմիջապես հետո (տե՛ս վերելում՝ 35-րդ պարբերությունը), եւ որ ձեռնարկվել են մի շարք քննչական միջոցառումներ, այդ թվում՝ մեղադրանք է առաջադրվել ենթադրաբար վատ վերաբերմունք իրականացնող մի քանի անձանց: Վերսկսված քննության ավարտին՝ վերջնական որոշումը կայացվելու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում, դիմումատուն դիմել է Դատարան (տե՛ս վերելում՝ 44-րդ պարբերությունը), եւ հետեւաբար կարելի է համարել, որ նա պահպանել է վեցամսյա ժամկետը:

72. Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները՝ Վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի մայիսի 30-ի որոշման դեմ (տե՛ս վերելում՝ 53-րդ պարբերությունը) չներկայացնելով վճարելի բողոք, ապա Դատարանը վերահաստատում է, որ ներպետական միջոցները չսպառելու մասին պնդող Կառավարությունն է պարտավոր Դատարանում ապացուցել, որ իրավական պաշտպանության այդ միջոցը եղել է արդյունավետ, տվյալ ժամանակահատվածում տեսականորեն ու գործնականում հասանելի, այսինքն՝ այն մատչելի է եղել, դրա միջոցով հնարավոր է եղել դիմումատուի բողոքների մասով հատուցում տրամադրել, ինչպես նաեւ դրանով ընձեռվել է հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Սելահաթին Դեմիրտաշն ընդդեմ Թուրքիայի (թիվ 2) [ՄՊ] [Selahattin Demirtaş v. Turkey (no. 2) [GC]], թիվ 14305/17, § 205, 2020 թվականի դեկտեմբերի 22):

73. Դատարանն ի սկզբանե նշում է, որ Վերաքննիչ քրեական դատարանի վերոնշյալ որոշումը, որը դիմումատուն չի վիճարկել, ուժի մեջ է մտել այն հրապարակելու պահից (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը): Թեեւ Վճռաբեկ

դատարանը, նշված ժամանակահատվածում գործող քրեական դատավարության կանոններին համապատասխան, իրավասու էր վերանայել բոլոր ավելի ցածր դատարանների օրինական ուժի մեջ մտած որոշումները (տե՛ս վերելում՝ 47-րդ պարբերությունը), որոշման մեջ ուղղակիորեն չի նշվել, որ այն ենթակա է բողոքարկման (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը): Ավելին, վճռաբեկ բողոք կարող էր ներկայացվել վեցամսյա ժամկետում եւ ավելին, դա հասանելի էր միայն մեղադրյալին, տուժողին եւ քաղաքացիական հայցվորին կամ ամբաստանյալին (տե՛ս վերելում՝ 47-րդ պարբերությունը): Հաշվի առնելով նշված ժամանակահատվածում վճռաբեկ վարույթի առանձնահատկությունները՝ հարց է ծագում, թե արդյոք ընդհանրապես վճռաբեկ բողոքը եղել է սպառման նպատակներով կիրառվող իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, կամ եթե այո, ապա արդյոք կոնկրետ դիմումատուի դեպքում այն եղել է իրավական պաշտպանության մատչելի միջոց՝ հաշվի առնելով վարույթի այդ փուլում նրա՝ որեվէ դատավարական կարգավիճակ չունենալը: Կառավարությունը չի տրամադրել որեվէ բացատրություն այդ մասով: Հետեւաբար Դատարանը չունի բավարար հիմքեր՝ ընդունելու Կառավարության՝ իրավական միջոցները չսպառելու մասին պնդումները՝ մասնավորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ վարույթը վերաբերել է դիմումատուի՝ իրեն տուժող ճանաչելու պահանջին՝ եւ՝ ներպետական իրավունքի, եւ՝ 3-րդ հոդվածից բխող դատավարական պարտավորության համաձայն նախաքննության մարմնից պահանջվող դատավարական գործողություն, որը պետք է իրականացվեր վերջինիս նախաձեռնությամբ՝ չթողնելով այն դիմումատուի նախաձեռնությանը (տե՛ս, *mutatis mutandis*, Նաչովան եւ այլք ընդդեմ Բուլղարիայի [ՄՊ] [Nachova and Others v. Bulgaria [GC]], թիվ 43577/98 եւ 43579/98, § 111, ՄԻԵԴ 2005-VII):

74. Հետեւաբար Դատարանը Կառավարության երկու նախնական առարկություններն էլ մերժում է:

75. Վերոհիշյալ նկատառումները բավարար են, որպեսզի Դատարանը գա այն եզրահանգման, որ իշխանությունները չեն իրականացրել դիմումատուի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումների արդյունավետ քննություն: Այս

հանգամանքներում այն անհրաժեշտ չի համարում նաև անդրադառնալ նախաքննության ընթացքում հատուկ քննչական միջոցառումների համապատասխանության եւ ամբողջականության ենթադրյալ բացակայության վերաբերյալ դիմումատուի փաստարկներին:

76. Համապատասխանաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական հայեցակետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

77. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

78. Դիմումատուն պահանջել է 40 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում: Նա նաեւ պահանջել է 53 210 ԱՄՆ դոլար՝ որպես նյութական վնասի հատուցում, որը ներառում է իր նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի հետեւանքով առաջացած բժշկական ծախսերը եւ 1999-2000 թվականներին իր՝ ենթադրաբար անօրինական կալանքի հետեւանքով առաջացած կորուստները:

79. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի ոչ նյութական վնասի հետ կապված պահանջը չափազանցված է: Ինչ վերաբերում է նրա նյութական վնասների հատուցմանը, ապա նյութական վնասի եւ ենթադրյալ խախտման միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ առկա չէ:

80. Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական հայեցակետի խախտման եւ

ենթադրյալ նյութական վնասի միջեւ. հետեւաբար այն մերժում է այս պահանջը: Այդուհանդերձ, այն դիմումատուին շնորհում է 10 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

81. Դիմումատուն նաեւ պահանջել է 64 787 ԱՄՆ դոլար՝ ներպետական դատարաններում կրած, եւ 3 730 ԱՄՆ դոլար՝ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար: Դրանք ներառում են իրավաբանական ծախսերը, փոստային ծառայությունների համար կրած ծախքերը, դատարանին վճարված վճարները եւ այն ծախքերը, որոնք կապված են եղել քննությանը եւ մի շարք այլ վարույթներին մասնակցելու նպատակով դիմումատուի կողմից ենթադրաբար Հայաստան կատարած մի քանի ուղեւորությունների հետ, եւ այդ ուղեւորությունների հետեւանքով ենթադրաբար կորսված աշխատավարձերը:

82. Կառավարությունը նշել է, որ պահանջված ծախսերի եւ ծախքերի մի մասը, մասնավորապես՝ 2 611 721 ՀՀ դրամ գումարը, արդեն հատուցվել է դիմումատուին ներպետական մակարդակում, իսկ բնակության եւ սննդի, ինչպես նաեւ ենթադրաբար կորսված աշխատավարձի հետ կապված ծախքերը չեն հիմնավորվել որեւէ փաստաթղթային ապացույցով:

83. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք միայն այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործով պահանջված ծախսերի եւ ծախքերի մի մասը չեն հիմնավորվել որեւէ փաստաթղթային ապացույցով, իսկ մյուսներն ուղղակիորեն կապված չեն եղել Դատարանում քննվող՝ դիմումատուի գործի հետ: Հիմնվելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերի եւ վերոնշյալ չափորոշիչների վրա՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել 3 500 եվրո գումար՝ որպես բոլոր պահանջների մասով ծախսերի ու ծախքերի փոխհատուցում՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՍԲ ԴԱՏԱԴԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Միացնում է* Կառավարության՝ վեցամսյա կանոնը ենթադրաբար չպահպանելու եւ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասին նախնական առարկություններն ըստ էության քննությանը եւ *մերժում է* դրանք.

2. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական հայեցակետի խախտում.

4. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 10 000 եվրո (տաս հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 3 500 եվրո (երեք հազար հինգ հարյուր եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2023 թվականի հունիսի 13-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Անդրեա Տամիետտի՝
Քարտուղար

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր՝
Նախագահ